Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Երջանկություն ցանկանալ նրանց, ում մենք սիրում ենք

Բոլորս էլ երջանկություն ենք ցանկանում նրանց, ում սիրում ենք, և մենք ցանկանում ենք, որ նրանք ունենան որքան հնարավոր է քիչ ցավ: Երբ Մորմոնի Գրքում մենք կարդում ենք երջանկության և ցավի վերաբերյալ պատմություններ, մեր սրտերը լցվում են, մինչ մենք խորհում ենք մեր սիրելիների մասին: Ահա երջանիկ պահի մի ճշմարիտ պատմություն.

«Եվ եղավ այնպես, որ չկար ոչ մի հակառակություն երկրում Աստծո սիրո շնորհիվ, որը բնակվում էր մարդկանց սրտերում:

Եվ չկային նախանձություններ, ոչ էլ պայքարներ, ոչ էլ խլրտումներ, ոչ էլ պոռնկություններ, ոչ էլ ստախոսություններ, ոչ էլ սպանություններ, ոչ էլ որևէ ձևի հեշտասիրություն. և, անկասկած, ավելի երջանիկ ժողովուրդ չէր կարող լինել այն բոլոր ժողովուրդների մեջ, որոնք ստեղծվել էին Աստծո ձեռքով»:

Ապա մենք կարդում ենք.

«Եվ որքա՜ն օրհնված էին նրանք: Քանզի Տերն օրհնում էր նրանց բոլոր իրենց գործերում. այո, նրանք օրհնված էին ու բարգավաճում էին նույնիսկ մինչև հարյուր և տաս տարիներ անցնելը, և առաջին սերունդը՝ Քրիստոսից սկսած, անց էր կացել. և ողջ երկրում չկար ոչ մի հակառակություն» (4 Նեփի 1.15–16, 18):

Քրիստոսի սիրելի աշակերտներն աղոթում և աշխատում են, որ ուրիշները և իրենք էլ ունենան նման օրհնություն: Մորմոնի Գրքի պատմություններից ելնելով և մեզանից շատերն էլ ելնելով մեր իսկ փորձառություններից՝ գիտենք, որ երջանկության պարգևը հասանելի է բոլորին: Մենք գիտենք, որ երջանկության ուղին լավ նշված է: Մենք նաև գիտենք, որ երջանկությունը պահպանելը հեշտ չէ, բայց հնարավոր է, եթե, ինչպես նեփիացիների դեպքում Փրկիչի այցելությունից հետո, «Աստծո սերն» առկա է մեր սրտերում:

Նեփիացիներն ունեին այդ սերն իրենց սրտերում, քանի որ նրանք պահում էին օրենքը, որը դա հնարավոր էր դարձնում: Այդ օրենքն ամփոփված է հաղորդության աղոթքներում, որոնք սկսվում են մեր սիրելի Երկնային Հորն ուղղված սրտաբուխ աղաչանքով: Մենք աղոթում ենք հավատքով և խորը սիրով լի սրտերով առ մեր անձնական Փրկիչը: Անկեղծ միտումով մենք պարտավորվում ենք վերցնել մեզ վրա Նրա անունը, հիշել Նրան և պահել Նրա բոլոր պատվիրանները: Ի վերջո, մենք հավատք ենք գործադրում, որպեսզի Սուրբ Հոգին՝ Աստվածազլխի երրորդ անդամը, միշտ լինի մեզ հետ՝ վկայելով մեր սրտերին Հոր և Նրա Սիրելի Որդու մասին: (Տես ՎևՈւ 20.77, 79:)

Սուրբ Հոգու ընկերակցությամբ մեր սրտերը կարող են փոխվել, որպեսզի մենք ցանկանանք և ողջունենք մեր Երկնային Հոր և Տեր Հիսուս Քրիստոսի սերը: Մեր սրտերում Աստծո սերն ունենալը նույնքան հեշտ է, որքան մեր սրտերում սիրո այդ զգացողությունը կորցնելը: Օրինակ, մարդը կարող է ընտրել ոչ հաճախ աղոթելը Երկնային Հորը, կամ չվճարել լրիվ տասանորդ, կամ դադարեցնել Աստծո խոսքով սնվելը, կամ անտեսել աղքատներին և կարիքավորներին:

Տիրոջ պատվիրանները չպահելու ցանկացած ընտրություն կարող է պատճառ դառնալ, որպեսզի Հոգին հեռանա մեր սրտերից: Այդ կորստին զուգահեռ նվազում է երջանկությունը:

Երջանկությունը, որը մենք ցանկանում ենք մեր սիրելիներին, կախված է նրանց ընտրություններից: Որքան էլ մենք սիրենք երեխային, ավետարանով հետաքրքրվողին կամ մեր ընկերներին, մենք չենք կարող ստիպել նրանց պահել պատվիրանները, որպեսզի նրանք արժանի լինեն, որ Սուրբ Հոգին դիպչի նրանց սրտերին և փոխի դրանք:

Այսպիսով, լավագույն օգնությունը, որ մենք կարող ենք տալ նրանց, այն է, ինչը որ կառաջնորդի մեր սիրելիներին վերահսկել իրենց սեփական ընտրությունները: Ալման արեց դա հրավերով, որը դուք կարող եք առաջարկել.

«Այլ, որ դուք խոնարհեցնեք ձեզ Տիրոջ առաջ, և կանչեք նրա սուրբ անունը, և արթուն կենաք ու շարունակ աղոթեք, որպեսզի դուք չլինի թե փորձվեք ավելի, քան դուք կարող եք դիմանալ, և այսպես առաջնորդվեք Սուրբ Հոգուց՝ դառնալով խոնարհ, հեզ, հլու, համբերատար, սիրով և ողջ երկայնամտությամբ լի.

Ունենալով հավատք առ Տերը. ունենալով մի հույս, որ դուք պիտի ստանաք հավերժական կյանք. ունենալով Աստծո սերը միշտ ձեր սրտերում, որպեսզի դուք կարողանաք բարձրացվել վերջին օրը և մտնել նրա հանգիստը» (Ալմա 13.28–29):

Ես աղոթում եմ, որ նրանք, ում դուք սիրում եք, ընդունեն հավերժական երջանկության ուղին ընտրելու ոգեշնչված հրավերը:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Այրինգն ուսուցանում է, որ կյանքում մեր զգացած երջանկությունը կախված է մեր կայացրած որոշումներից: Երբ դուք քննարկեք այս ուղերձը, կենտրոնացեք այն բաների վրա, որոնք Նախագահ Այրինգը նշում է, որ մենք կարող ենք ընտրել անելու (ինչպես օրինակ աղոթել, աշխատել, հավատք գործադրել և անկեղծ միտումով նվիրվելը), որը կտանի մեզ դեպի երջանկության ուղին: Դուք կարող եք հրավիրել նրանց, ում ուսուցանում եք, գրել երկու կամ երեք գործողություններ, որոնք նրանք կցանկանան կատարել, ավելի մոտեցնելով նրանց «հավերժական երջանկության ուղուն»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Գործողություններ, որոնք տանում են դեպի երջանկություն

Նախագահ Այրինգն ուսուցանում է, որ «երջանկությունը, որը մենք ցանկանում ենք մեր սիրելիներին, կախված է նրանց ընտրություններից»:

Դուք կարող եք կարդալ ընտրությունների ազդեցությունների մասին Նեփիի, Լամանի և Լեմուելի օրինակներից: Լամանը և Լեմուելը տրտնջացին և չցանկացան պահել պատվիրանները (տես 1 Նեփի 2.12): Արդյունքում նրանք և նրանց սերունդներն անիծվեցին և կտրվեցին Տիրոջ ներկայությունից (տես 2 Նեփի 5.20–24): Նեփին ընտրեց հնազանդվել պատվիրաններին (տես 1 Նեփի 3.7) և այդ իսկ պատճառով նա և նրա ժողովուրդը «ապրեցին երջանիկ» (2 Նեփի 5.27):

Դուք կարող եք ընտրել լինելու արդար և երջանիկ: Սակայն ձեր շրջապատում գտնվող մարդիկ հավանաբար կշարունակեն սխալ ընտրություններ կատարել, որոնք առաջ կբերեն թշվառություն կամ անհարմարություններ: Մինչդեռ որոշումներ կայացնելը նրանց իրավունքն է, ձեր օրինակը կարող է ազդել նրանց ընտրությունների վրա ի բարին: Ինչպե՞ս կարող են ձեր ընտրությունները երջանկություն բերել ուրիշներին: Ձեր ընտանիքի հետ քննարկեք տարբեր ուղիներ, որոնցով դուք կարող եք դրական ազդեցություն գործել ձեզ շրջապատող մարդկանց վրա և օգնել նրանց երջանիկ լինել:

ԵՐԵԽԱՆԵՐ

Բարի լինելու մարտահրավեր

Երբ Հիսուսն այցելեց Ամերիկաների ժողովրդին, Նա ուսուցանեց նրանց սիրել միմյանց և բարի լինել: Ի՞նչ կարող եք դուք անել, որպեսզի հետևեք Հիսուսին և սիրեք ուրիշներին: Ահա որոշ մտքեր: Ժամանակի ընթացքում նշեք յուրաքանչյուր մարտահրավեր, որը կատարում եք:

- ☐ Ես կարող եմ գրկել մեկին, ով տխուր է:
- ☐ Ես կարող եմ որևէ մեկին գաղտնի ծառայություն մատուցել:
- ☐ Ես կարող եմ կարդալ կամ դիտել բարի լինելու վերաբերյալ ելույթ գերագույն համաժողովից:
- ☐ Ես կարող եմ իմ ընտանիքի համար երգել Երեխաների Խմբի երգերից մեկը:
- ☐ Ես կարող եմ ժպտալ մեկին, ով թվում է, թե միայնակ է:
- ☐ Ես կարող եմ _____:
- ☐ Ես կարող եմ _____:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *First Presidency Message, January 2016*-ի թարգմանությունը: Armenian 12861 201

Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և փորձեք հասկանալ, թե ինչով պետք է կիսվեք: Ընտանիքի վերաբերյալ վարդապետությունը հասկանալն ինչպե՞ս կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

1995 թվականի Սփոփող Միության գերագույն ժողովի մասին, որի ժամանակ Նախագահ Գորդոն Բ. Հինքլին (1910–2008) առաջին անգամ ընթերցեց «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» ուղերձը, Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ Բոննի Լ. Օսկարսոնն ասել է. «Մենք երախտապարտ էինք և արժևորում էինք հայտնությամբ ստացված այս փաստաթղթի հստակությունը, պարզությունը և ճշմարտացիությունը: . . . Ընտանիքին վերաբերող հայտարարությունը դարձել է մեր չափանիշը աշխարհի փիլիսոփայությունների շուրջ կարծիք կազմելու հարցում, և ես վկայում եմ, որ այս հայտարարության մեջ ներկայացված սկզբունքները նույնքան ճշմարիտ են այսօր, որքան այն ժամանակ, երբ դրանք տրվեցին մեզ Աստծո մարգարեի կողմից՝ գրեթե 20 տարի առաջ»:[1]

«Ընտանիքի վերաբերյալ հայտարարությունից,- ավելացնում է Սփոփող Միության գերագույն նախագահության առաջին խորհրդական Քերոլ Մ. Սթեֆենսը,- մենք սովորում ենք. «Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն որպես իրենց Հավերժական Հորը»[2] . . .

. . . Մեզանից յուրաքանչյուրը պատկանում է Աստծո ընտանիքին, որտեղ կա մեր կարիքը»:[3]

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ ծնողները պետք է պաշտպանեն իրենց տները և իրենց ընտանիքներին: «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» ուղերձը կարող է առաջնորդել մեզ:

Լրացուցիչ սուրբ գրություններ

Մոսիա 8.16–17, Վարդապետություն և Ուխտեր 1.38

Իրական պատմություններ

«Տաո Յուան Ցցի Տաո Յուան Երրորդ Ծխից Լի Մի Չեն Հոն ասել է, որ հայտարարությունն իրեն ուսուցանել է, որ ընտանեկան հարաբերություններն օգնում են զարգացնել աստվածային հատկանիշներ, ինչպես օրինակ՝ հավատք, համբերություն և սեր: «Երբ ես փորձում եմ բարելավել իմ վարքը համաձայն հայտարարությանը, ես կարողանում եմ զգալ իսկական երջանկություն», - ասել է նա:[4]

Բարբարա Թոմսոնը, ով ներկա է եղել, երբ հայտարարությունը ընթերցվել է առաջին անգամ, և ով ավելի ուշ ծառայել է որպես Սփոփող Միության գերագույն նախագահության խորհրդական, ասել է. «Մի պահ ես մտածեցի, որ [ընտանիքի վերաբերյալ հայտարարությունը] իրականում ինձ այդքան էլ չէր վերաբերում, քանի որ այդ ժամանակ ես ամուսնացած չէի և չունեի ոչ մի երեխա: Սակայն հենց նույն պահին էլ ես մտածեցի. «Բայց այն վերաբերում է ինձ: Ես ընտանիքի անդամ եմ: Ես դուստր եմ, քույր, հորաքույր, զարմուհի և թոռնուհի: . . . Եթե նույնիսկ ես լինեի իմ ընտանիքի միակ կենդանի անդամը, ես միևնույնն է Աստծո ընտանիքի անդամ կլինեի»:[5]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բոննի Լ. Օսկարսոն, «Ընտանիքի մասին հայտարարության պաշտպանները», *Լիահոնա,* մայիս 2015, 14–15:
2. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129):
3. Քերոլ Մ. Սթեֆենս, «Ընտանիքն Աստծուց է», *Լիահոնա,* մայիս 2015, 11:
4. Nicole Seymour, "'The Family: A Proclamation to the World' reaches 10-Year Milestone, *Liahona,* Nov. 2005, 127.
5. Barbara Thompson, in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* (2011), 148.

Խորհեք այս մասին

Ինչպե՞ս է «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» ուղերձը վերաբերում մեր օրերին:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/15: Թարգմանության հաստատումը. 6/15: *Visiting Teaching Message, January 2016*-ի թարգմանությունը: Armenian 12861 201